ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

ք. Երևան **18 ՄԱՐՏ 2021թ.**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի 15 մարտ 2021 թվականի N 1–Լ որոշմամբ՝ հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ Կառավարման խորհրդի հերթական նիստ: Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2021թ-ի մարտի 15-ին և ավարտվել՝ մարտի 17-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել է Կառավարման խորհրդի անդամներին:

Կառավարման խորհրդի նիստին մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի նախագահ՝ Անդրանիկ Փիլոյանը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ս.Պապիկյանը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա. Ասոյանը	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Կ. Բրուտյանը	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վ.Դանիելյանը	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա.Ղուլարյանը	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ս. Թովմասյանը	ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Ա. Դանիելյանը	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ

Մ. Սանդոյանը « ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ

Ա. Կարապետյանը «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն

Ս. Թովմասյանը «Ճարտարապետության և շինարարության ՀՀ ազգային համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ:

Կառավարման խորհրդի նիստին և քվարկությանը չի մասնակցել Կառավարման խորհրդի անդամ՝ Ա.Ավանեսյանը ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ:

Քվորումն ապահովված էր:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 1025-Ն ՀՀ կառավարության որոշման նախագծին (հավելված 1):

2. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում փոփոխություն կատարելու մասին ցանկին՝ համաձայն հավելվածի (հավելված 2).

Քվեարկությունը համարվեց կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Անդրանիկ Փիլոյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
2. Ս.Պապիկյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
3. Ա. Ասոյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
4. Կ. Բրուտյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
5. Վ. Դանիելյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
6. Ա.Ղուլարյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
7. Ս. Թովմասյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
8. Ա.Կարապետյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
9. Ա. Դանիելյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,

Սարգիս Թովմասյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,

11. Մ. Սանդոյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 1025-Ն ՀՀ կառավարության որոշման նախագծին (հավելված 1):

2. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում փոփոխություն կատարելու մասին ցանկին՝ համաձայն հավելվածի (հավելված 2):

Կառավարման խորհրդի նախագահ՝

ստորագրություն **Ա. Փիլոյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝

ստորագրություն **Ն.Մկրտչյան**